ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մուրադյան Լիլիթ Հայկազի

Իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. սահմանադրական փոփոխությունների համատեքստում

ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2020

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

Мурадян Лилит Айказовна

Проблемы правотворческой деятельности в Республике Армения: в контексте конституционных изменений

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности: 12.00.01 – «Теория и история государства и права; история государственных и правовых учений»

Ереван 2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ.Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր **Ա.Մ. Խաչատուրյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ.Ս. Խաչատրյան**

Առաջատար կազմակերպություն՝ **«Եվրասիա» միջազգային համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հունվարի 26-ին ժամը 14^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհուրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին փ., 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2020թ. դեկտեմբերի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու Ջ.Հ.Հայրապետյան

Тема диссертации утверждена на заседании Ученого совета Института философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г.Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, **А.М. Хачатурян**
кандидат юридических наук **Г.С. Хачатрян**

Ведущая организация: **Международный университет «Евразия»**

Защита состоится 26 января 2021г. в 14^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 16 декабря 2020г.

Ученый секретарь специализированного совета
кандидат юридических наук Дж.А. Айрапетян

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից հայ հասարակության զարգացման բնորոշ գիծը հանդիսանում է մեծ ուշադրությունը իրավաստեղծ գործունեության հանդեպ, որը կապված է ՀՀ Սահմանադրության փոփոխություններից (2015թ.) հետո ազգային իրավական համակարգի և օրենսդրության արմատական փոփոխությունների հետ: Սոցիալական բարեփոխումները ենթադրում են իրավաստեղծ գործընթացի ինտենսիվ զարգացում: Արդիական է դառնում իրավաստեղծման ազգային դոկտրինի ձևավորումը՝ հաշվի առնելով ազգային (հայկական) իրավական մշակույթի ժառանգությունը և առանձնահատկությունները:

Հասարակական առաջընթացը մեծապես պայմանավորված է գոյություն ունեցող և նոր երևան եկող հասարակական հարաբերությունների համարժեք իրավական կարգավորմամբ, որն իր հերթին, ենթադրում է գիտական և ստեղծագործական մոտեցում, հակառակ դեպքում, անորակ օրենսդրական ակտերի «առատությունը» և դրանց հաճախակի փոփոխությունները ոչ միայն չեն նպաստում հասարակական հարաբերությունների արդյունավետ իրավական կարգավորմանը, այլև շատ դեպքերում (օրինակ, արդարադատության և մարդու իրավունքների պաշտպանության ոչ արդյունավետությունը և այլն) խանգարում են հասարակության առաջընթաց զարգացմանը:

Իրավաստեղծ գործունեության ակտիվացումը, որն արտահայտվում է ազգային իրավական կարգավորման համար օրենսդրական, ենթաօրենսդրական և իրավակիրառ ակտերի աննախադեպ աճով իրավական հարաբերությունների հիմնական ոլորտներում՝ սահմանադրական, քաղաքացիական-իրավական, վարչական, ֆինանսական, բնապահպանական, հանցագործության դեմ պայքարի ոլորտներում և այլն, դրական հետևանքների հետ միասին դարձել է մի շարք նորմատիվ իրավական ակտերի որոշ բացասական գործընթացների աղբյուր: Դրանց թվին պետք է դասել ենթաօրենսդրական ակտերի քանակի մեծ աճը սոցիալական կառավարման հիմնական ոլորտներում, նորմատիվ կարգավորման կատարելագործման խնդիրների և նպատակների պարզ ձևավորվածության բացակայությունը, նորմաստեղծ գործունեության փաստացի տարերայնությունը իշխանության բոլոր մակարդակներում: Դրա հետ կապված՝ իրավաստեղծ ակտերի գործողության արդյունավետությունը մեծապես նվազում է: Այսպիսի երևույթների պատճառներ են օրինաստեղծ գործունեության ոչ բարձր մակարդակը և օրենսդրական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների ցածր որակը, շատ անկատար, հակասական, նորմատիվ իրավական ակտերի ընդունման ավելորդ

շտապողականությունը, որոնք համաձայնեցված չեն միմյանց հետ, ծնում են բախումներ ու բացթողումներ օրենսդրական գործունեության արդյունքների՝ նորմատիվ իրավական ակտերի և նրանց հիման վրա ընդունված որոշումների միջև: Բազմաթիվ շտկումներ, որոնք ներմուծվում են օրենսդրության մեջ, նորմաստեղծ տեխնիկայի ցածր մակարդակը, իրավաբանական հասկացությունների լղոզվածությունը, բացասաբար են անդրադառնում իրավակարգավորումների արդյունավետության և օրենսդրական ակտերի (նորմատիվ-իրավական ակտերի) որակի վրա:

Իրավաստեղծման արդյունավետ մեխանիզմի ձևավորումը, որը կհամապատասխանի իրավական կարգավորման ժամանակակից պահանջներին, հանդիսանում է իրավագիտության առաջնահերթ խնդիրներից մեկը: Դրա լուծումն անհնար է առանց իրավաստեղծ կառուցակարգի (մեխանիզմի) գիտականորեն մշակված հայեցակարգի, որը պետք է հիմնվի ազգային իրավաստեղծ ավանդույթի, ժամանակակից իրավական պետությունների փորձի ընկալման, իրավաբանական բնույթի հետազոտման, կառուցվածքային կազմակերպման, իրավաստեղծ մեխանիզմի գործառույթների, ռեժիմների, մեթոդների, միջոցների, մակարդակների, գործարկման փուլերի, շրջակա միջավայրի հետ կապերի վրա: Այս պայմաններում ազգային իրավաստեղծ գործոններին և իրավաստեղծ մեխանիզմի կատարելագործման խնդիրն աստիճանաբար դառնում է խնդրահարույց հարց գիտական և գործնական շրջանակներում: Դրա համար էլ հետազոտությունները, որոնք ուղղված են իրավաստեղծման տեսության, նորմաստեղծման պրակտիկայի կատարելագործման և դրանց հետագա զարգացմանը, իրավունքի աղբյուրների ծագումնաբանության բոլոր մակարդակներում ձեռք են բերում կարևոր նշանակություն:

Հետևաբար, իրավաստեղծ գործունեության հիմնահարցերի գիտական հետազոտությունն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել և դարձել է իրավագիտության հրատապ խնդիրներից մեկը, հատկապես ՀՀ Սահմանադրության փոփոխությունների համատեքստում և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումով:[1] Իրավաստեղծ գործունեության շրջանակներում ծավալվող բազմաթիվ հարաբերությունների բովանդակության, դրանց բնութագրական հատկանիշների գիտական իմացության աստիճանով է պայմանավորված իրականացվելիք սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների հաջողությունը, ընդունվող իրավական ակտերի գործողության արդյունավետությունը

[1] Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 28 մարտի 2018 թվականի ՀՕ-180-Ն օրենքը // ՀՀ ՊՏ N 23 (1381) 28 մարտի 2018:

և սպասվելիք սոցիալական արդյունքը:

Վերոնշվածով է բացատրվում իրավաստեղծ գործունեության կատարելագործման տեսական և մեթոդաբանական հիմնահարցերի հետազոտության արդիականությունը:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Իրավաբանական գրականության մեջ իրավաստեղծման հարցերին նվիրված են մենագրություններ, ատենախոսություններ, հոդվածներ, ուսումնական և գործնական ձեռնարկներ: Իրավաբանական գրականությունը, այդ թվում խորհրդային շրջանում, մեծ ուշադրություն է դարձրել իրավաստեղծման հարցերի մշակմանը: Նկատվել են իրավաստեղծման հանդեպ երկու մոտեցումներ՝ նեղ, որպես նորմատիվ իրավական ակտերի ստեղծման գործընթաց և լայն՝ որպես հասարակական հարաբերությունների՝ նորմատիվ իրավական կարգավորման մեջ պահանջմունքների բացահայտման ու դրանց համապատասխան իրավական նորմերի ստեղծման, գործող նորմերի փոխարինման և վերացման գործունեություն: Իրավաստեղծման հարցերի առաջադրման ու լուծման մեջ մեծ ներդրում են ունեցել հայրենական և ռուս գիտնականներ՝ Ն. Ա. Ապիյանը, Ժ.Դ. Ջհանգիրյանը, Վ. Վ. Ստեփանյանը, Վ.Ռ. Նազարյանը, Գ. Հ. Սաֆարյանը, Ա. Գ. Վաղարշյանը, Է. Գ. Դանիելյանը, Ս.Ս. Ալեքսեեվը, Վ.Ս. Ներսեսյանցը, Վ.Կ. Բաբաեվը, Մ.Ի. Բայտինը, Վ.Մ. Բարանովը, Վ.Ն. Կազիմիրչուկը, Ի.Ֆ. Կուզմինը, Դ.Ա. Կերիմովը, Դ-.Ա. Կովաչովը, Վ.Ն. Կուդրյավցեվը, Ն.Ն. Վոպլենկոն, Վ.Վ. Լազարեվը, Ե.Ա. Լուկաշեվան, Գ.Վ. Մալցեվը, Վ.Մ Մանոխինը, Մ.Ն. Մարչենկոն, Ա.Վ. Միցկեվիչը, Ա.Նաշիցը, Ա.Ս, Պիգոլկինը, Ս.Վ.Պոլենինան, Ի.Ս. Սամոշենկոն, Վ.Մ. Սիրիխը, Յու. Ա. Տիխոմիրովը, Ռ.Օ. Խալֆինան, Ա.Ֆ. Չերդանցեվը, Գ.Տ. Չենրոբելը և այլ հեղինակներ, ում աշխատանքները ծառայել են որպես սույն հետազոտության տեսական հիմք:

Ժամանակակակից գրականության մեջ նորմաստեղծման հետազոտության խնդիրը բազմաթիվ անգամներ ընդլայնվել է և տարբերակվել, ավելացվել են նախկինում անհայտ թեմաներ, որոնք կապված են իրավունքի ու օրենսդրության համակարգի նորացման, իրավաբանական տեխնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործման հետ: Իրավաստեղծման այսպիսի խնդիրներ դիտարկվել են Յու.Գ. Արզամասովի, Ի.Լ. Բաչիլոյի, Ի.Ա. Բոբիլեվայի, Ս.Վ. Բոշնոյի, Ն.Ա. Վլասենկոյի,. Մ.Ե. Գլազկովայի, Լ.Վ. Գոլոսկոկովի, Դ.Բ. Գորոխովի, Տ.Ա. Զոլոտուխինայի, Վ.Դ. Զորկինի, Վ.Բ. Իսակովի, Վ.Ն. Կարտաշովի, Ա. Տ.Վ. Կաշանինայի, Ն.Պ. Կոլդաեվայի, Ա.Պ. Կորոբովայի, Պ.Վ. Կրեշենիննիկովի, Ա.Յու. Լավրիկի, Վ.Վ. Լապաեվայի, Ա.Բ. Լիսյուտիկինայի, Ա.Բ. Մազուրենկոյի, Ա.Վ. Մալկոյի, Լ.Ա. Մորոզովայի, Տ.Ն. Մոսկալկովայի, Տ.Ն. Ռախմանինայի, Վ.Ա. Սապունի, Ի.Ն.

Սենյակինի, Վ.Վ. Տրոֆիմովի, Տ.Յա. Խաբրիեվայի, Օ.Ի. Ցիբուլեվսայայի, Դ.Վ. Չուխանչեվի, Վ.Ի. Շեպելյովի, Ի.Ի. Շուվալովսյի և այլ հեղինակների աշխատություններում:

Տվյալ թեմայի հետազոտման ներկա փուլը կապված է սահմանադրական փոփոխությունների հետևանքով իրավաձևավորման ու իրավաստեղծման ոլորտում իրավիճակի արմատական բարելավման անհրժեշտության հետ: Լուրջ կառուցվածքային և բովանդակային ձևախեղումներն իրավական կարգավորման մեջ պահանջում են համակարգային և գիտականորեն հիմնավորված մոտեցում իրավաստեղծման և իրավակիրառման գործընթացների նկատմամբ:

Հետազոտության օբյեկտ է համարվում այն հասարակական հարաբերությունները, որոնք ձևավորվում են նորմաստեղծ գործունեության ընթացքում:

Հետազոտության առարկան է համարվում իրավաստեղծման գործնական հիմնախնդիրները, տեսական և օրենսդրական ձևակերպումները, հասկացությունները, կատեգորիաները, կարգավորիչ և ճանաչողական ինստիտուտները և կառույցները, որոնք ստեղծվում են օրենսդրի ու դոկտրինայի կողմից իրավաստեղծման արդյունավետության բարձրացման նպատակով;

Հետազոտության հիմնական նպատակն է Հայաստանում իրավաստեղծման հարցերի համալիր ուսումնասիրությունը՝ իրավաստեղծման բնույթի, գործառույթների, կառուցակարգի և այլ հարակից հարցերի տեսական և գործնական կողմերի քննարկվող վերլուծությունն է առկա բացերի (սխալների) վերհանումը և գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը:

Դրված նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ **հարցադրումները.**

- վերլուծել իրավաստեղծման հասկացությունը, էությունը և իրավաբանական բնույթը, բացահայտել նրա կառուցվածքն ու գործառույթները իրավական կարգավորման մեջ,
- բացահայտել իրավաստեղծման հետ կապված համակարգային կազմակերպական հիմնախնդիրները, դրանց առանձնահատկությունները,
- բացահայտել իրավաստեղծման կառուցակարգի (մեխանիզմի) հարաբերակցությունը շրջակա սոցիալական միջավայրի հետ, վերհանել իրավաստեղծ գործընթացի ձևախեղումները, մշակել առաջարկություններ կապված նորմաստեղծ գործունեության և իրավակիրառ պրակտիկային իրավական կարգավորման կատարելագործման հետ:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքներն են կազմում

դիալեկտիկական վերլուծության և համադրության համագիտական մեթոդները, համակարգային-կառուցվածքային և ֆունկցիոնալ վերլուծության, ձևական-տրամաբանական, համեմատական-իրավական և ձևական-իրավաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքն են կազմում պետության ու իրավունքի տեսության և պատմության, ճյուղային իրավաբանական գիտությունների, փիլիսոփայական, սոցիոլոգիայի ոլորտների հայրենական ու արտասահմանյան գիտնականների աշխատությունները:

Հետազոտության գիտական նորույթը, ամենից առաջ նրանում է, որ հեղինակը հետազոտության արդյունքների հիման վրա մշակել է տեսական հիմնադրույթներ և գործնական առաջարկություններ, որոնց հանրագումարը կարելի է որակել որպես գիտական հիմնախնդրի լուծում, որն ունի կարևոր սոցիալ-քաղաքական և իրավական նշանակություն: Ատենախոսության մեջ ձևակերպված են իրավաստեղծ գործունեության հայեցակարգային հիմնադրույթներ՝ որպես համալիր տեսական կառուցակարգեր, գաղափարներ, սկզբունքներ, առաջնահերթություններ, որոնք կոչված են կատարելագործել և որակական նոր աստիճանի բարձրացնել իրավաստեղծ որոշումների բովանդակային մակարդակը:

Գիտական նորույթը դրսևորվում է նաև իրավակազմավորման և իրավաստեղծ գործունեության մշակույթի զարգացման գործընթացում իրավաստեղծման կառուցակարգերի կատարելագործման և ներուժի բացահայտման մեջ: Աշխատանքում հիմնավորվում է իրավաստեղծման կառուցակարգերի գործընթացի գիտական հետազոտությունների գերակայության առաջխաղացումը, որը բացահայտում է իրավաստեղծ պրոբլեմատիկայի հետազոտության նոր փուլ, իրավակազմավորման խնդիրների լուծման համար նոր մոտեցումների անհրաժեշտություն և դրանց գործնական կիրառում: Այս մոտեցումների նորույթը կայանում է իրավակազմավորման, նորմաստեղծման, օրինաստեղծման, իրավական կարգավորման և իրավակիրառիչ գործունեության բնագավառում նոր մոտեցումների ու լուծումների ներդրում՝ մեկ հիմնական նպատակով՝ բարելավել նորմատիվ-իրավական ակտերի որակը և իրավակարգավորումների արդյունավետությունը:

Աշխատանքում հիմնավորվում է հեղինակային հետևյալ հայեցակարգային մոտեցումը. ըստ որի օրինագծերի և օրենսդրական ակտերի հայեցակարգերի մշակման գործընթացում անհրաժեշտ է բացահայտել այն թիրախավորված սոցիալական ոլորտները և հասարակական հարաբերությունները, որոնք օբյեկտիվորեն ենթակա են կանոնակարգման և այն նախադրյալների համալիրը (սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն), որ առավել

հավանականությամբ կարող է ներազդեցություն ունենալ ապագա իրավակարգավորումների վրա: Այս ամենի բացահայտումը, մեր կարծիքով, կբարձրացնի ընդունվող նորմատիվ իրավական ակտերի որակը:

Իրականացված հետազոտության արդյունքում վերաիմաստավորվում են ավանդական մոտեցումները իրավաստեղծման խնդիրների վերաբերյալ, առաջարկվում են նոր գաղափարներ և առաջարկներ, որոնք ստեղծում են նախադրյալներ իրավաստեղծ գործունեության կատարելագործման, նրա սոցիալական հիմնավորվածության և իրավակարգավորումների արդյունավետության ապահովման համար:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները.

1. Աշխատանքում հիմնավորվում է իրավաստեղծման հասկացումն իրավունքի դոկտրինի, նրա աղբյուրների, իրավական համակարգի ժամանակակից մոտեցումների համատեքստում: Իրավաստեղծումն իրավական մշակույթի համալիր սոցիալական ինստիտուտ է, որը ներառում է գիտափիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, ֆորմալ-իրավաբանական, իրավունքի իրավակիրառ վերարտադրության մեխանիզմները:
2. Իրավաստեղծումը, որպես ժամանակակից իրավական կարգավորման բազմաբնագավառ և բազմաշերտ ինստիտուտ, ունի բարդ կազմակերպվածություն, որը ներառում է իրավագոյացման, նորմագոյացման, օրիանաստեղծման, իրավահիրացման, իրավագիտակցության տարրեր, որոնց վերլուծությունը տվյալ ենթատեքստում ենթադրում է համակարգային մոտեցման կիրառում: Իրավաստեղծման մեթոդաբանական նորույթը կայանում է իրավունքի ձևավորման մեջ դետերմինիստական կապերի հաղթահարման և իրավական հայեցակարգերի (իրավաբանական պոզիտիվիզմ, իրավունքի պատմական դպրոց, սոցիոլոգիական (իրավական ռեալիզմի դպրոց), ինտեգրման մեջ, որը ենթադրում է իրավաստեղծման գործընթացում տարբեր սոցիոմշակութային տեխնոլոգիաների օգտագործում:
3. Իրավաստեղծման կառուցակարգը բնութագրվում *է* իրավունքի ձևավորման գործընթացի համակարգային ոլորտը՝ կապված նրա սոցիալ-իրավական աղբյուրների և տեխնիկական ձևերի միասնության հետ: Իրավաստեղծումը չի կայանում միայն նորատիվ իրավական ակտերի ստեղծման մեջ, այն նաև ներառում է իրավաստեղծման ակտերի ձևավորում, որն ունի լայն սուբյեկտիվ կազմություն (պետություն, ժողովուրդ, ազգ, սոցիալական և հասարակական-քաղաքական կազմակերպություններ և ինստիտուտներ, իրավակիրառ

պրակտիկա): Իրավաստեղծման կառուցակարգը ենթադրում է նաև նորմատիվ իրավական ակտերի ստեղծման գործընթացում իրավագիտակցական, սոցիալ-հոգեբանական և գիտական-փիլիսոփայական առումները:

4. Իրավաստեղծ կառուցակարգը իրավաձևավորման գործընթացի կենտրոնական օղակն է: Իրավաստեղծման կառուցակարգը պետք է սւսհմանել որպես գիտական-գործնական կատեգորիա, որն արտացոլում է իրավաձևավորման ինստիտուտների համակարգված համալիր՝ ներառելով սոցիալ-իրավական գործիքներ ու միջոցներ, որոնք ուղղված են հասարակական հարաբերությունների կարգավորմանը և իրավական նորմատիվ համակարգի ձևավորմանը:
5. Աշխատանքում իրավաձևավորման և իրավաստեղծ գործընթացի համակարգային վերլուծության հիման վրա բացահայտվում են իրավաստեղծ գործունեության՝ որպես ամբողջական իրավական երևույթի բնորոշ գծերը, կառուցվածքը, բովանդակությունը, ձևը, որոնք էապես տարբերվում են այլ իրավական ինտիտուտներից: Բացահայտվել է նաև իրավաստեղծման՝ որպես իրավաստեղծ մտածողության համակարգային մեթոդաբանության հիմնական հասկացության իրավաբանական բնույթը:
6. Աշխատանքում դիտարկվել են իրավաստեղծման զարգացման հիմնական փուլերը՝ որպես իրավագիտության և իրավակիրառ պրակտիկայի հատուկ ուղղություններ, ներկայացվել են դրանց ձևավորման օրինաչափությունները իրավաստեղծման տեսության և իրավաճանաչման հիմնադրույթի հարաբերակցությունը, հիմնավորվել է իրավաստեղծման տիպերի հասկացությունը՝ որպես նորմաձևավորման համակարգված մեթոդաբանական մոտեցումների միասնություն: Դիտարկվել են նաև ազգային իրավաստեղծ ավանդույթի ձևավորման փուլերը, նրա զարգացման ժամանակակից փուլի առանձնահատկությունները:
7. Աշխատանքում բացահայտված է իրավաստեղծ գործունեության կառուցվածքային կազմակերպվածությունը, որը ներառում է իրավագոյացության հիմնական տարրերը՝ իրավաստեղծ քաղաքականության սկզբունքներ և ուղղություններ, իրավաստեղծ գործընթացներ և ընթացակարգեր, իրավաստեղծ ակտեր, իրավաստեղծ որոշումների ընդունում, իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկա և այլն: Ցույց են տրված իրավաստեղծման կառուցվածքային տարրերի փոխկապվածության, փոխազդեցության բնույթը և առանձնահատկությունները:
8. Ներկայացված են իրավաստեղծ գործունեության գործառութային առանձնահատկությունները, որոնք իրականացվում են իրավաստեղծման

տարբեր մեթոդների և միջոցների համադրության հատուկ սիներգետիկ ռեժիմում: Իրականացվել է տվյալ ինստիտուտի գործողության ֆունկցիոնալ վերլուծություն, բացահայտվել են իրավաստեղծման հիմնական ընդհանուր (անձի իրավական սոցիալիզացիա, սոցիալ-իրավաբանական պրակտիկայի վերաձևավորում, սոցիալական ընտրության գործառույթ) և հատուկ (հասարակական հարաբերությունների կայունացում, իրավունքի դինամիկայի ապահովում, իրավական արժևորում և այլն) գործառույթները:

9. Իրավական կարգավորման համակարգայնությունն անհնար է իրավաստեղծման համակարգվածությունից դուրս: Համակարգայնությունն իրավաստեղծման գործընթացի կարևորագույն օրինաչափությունն է, որը սահմանում է ինչպես իրավաստեղծման փուլերը և աստիճանները, այնպես էլ ստեղծվող նորմատիվ նյութի վերջնական բովանդակությունը, իրավակարգավորումների կանխատեսելի արդյունավետությունը:
10. Իրավաստեղծ գործունեությունն ունի կառուցվածքային ստրուկտուրալիզմի կարիք՝ կապված իրավակազմավորման հետևյալ ուղղությունների հետ. նախաիրավաստեղծ ինֆրակառուցվածքի կազմակերպում, իրավաստեղծ ակտերի նախագծերի մշակում, գործող օրենսդրության վերլուծում, գնահատում, մեկնաբանում և վերջնական որոշումների կայացում: Այստեղ հեղինակը որպես օրենսդրական նախաձեռնության իրականացման հատուկ սուբյեկտ է դիտարկում օրինաստեղծ գաղափարի հեղինակին (որը կարող է լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձը):
11. Իրավաստեղծ կառուցակարգը (մեխանիզմը) ներառում է իրավաստեղծ գործունեության բավարար չափով չուսումնասիրված տեխնոլոգիաներ և մեթոդիկաներ, որոնք աշխատանքում համակարգված են իրավաստեղծ խնդիրների լուծման հետևյալ ուղղություններով, իրավական համակարգի ներքին ամբողջականության և անհակասականության ապահովման մեթոդիկա, ներառյալ նոր կարգավորիչների ներմուծում և գործողություն, իրավական կարգավորման և իրավունքի տեղեկատվական-տեխնիկական հասանելիության դինամիկ կայունության ապահովման տեխնոլոգիաներ:
12. Իրավաստեղծ գործողությունը գտնվում է օրինաչափ կապի մեջ ազգային պետության իրավաստեղծ քաղաքականության հիմնական ուղղությունների հետ: Իրավաստեղծ գործունեությունը զգալի ազդեցություն է ունենում իրավական քաղաքականության անցկացման վրա, նրա կառուցվածքը և գործառույթները արտացոլում են իրավագոյացության օբյեկտիվ օրինաչափությունները և սուբյեկտիվ մոտեցումները: Իրավաստեղծման գործընթացը տալիս է

իրավաստեղծ քաղաքականության չափումներ, նախասահմանում է նրա սկզբունքները և գերակայությունները: Աշխատանքում համալիր վերլուծության է ենթարկվում պետական իրավաստեղծ քաղաքականության հիմնական ուղղությունները՝ իրավաստեղծ գործընթացի ինֆրակառուցվածքը, իրավական և օրենսդրական համակարգը, իրավաստեղծ որոշումների ընդունման գործընթացի կատարելագործման հիմնախնդիրները:

13. Իրավաստեղծ գործընթացում կարևոր դեր է խաղում իրավաձևավորող գործոնների համալիրը՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, միջազգային-իրավական, սոցիոմշակութային, ներառյալ ազգային և կրոնական: Իրավաստեղծ գործոնների ճիշտ հաշվառումը և հավասարակշռումը կարող է էական ազդեցություն ունենալ օրինագծի հիմնադրույթների մշակման որակի վրա, որով պայմանավորվում է նաև կանխատեսելի իրավակարգավորումների արդյունավետությունը:
14. Աշխատանքում հիմնավորվում է լայն մոտեցում իրավաստեղծ որոշման հասկացության հանդեպ նրա ձևերի միասնության մեջ՝ նորմատիվ իրավական ակտ, դատական պրակտիկայի իրավադրույթներ, նորմատիվ պայմանագիր, դոկտրին: Հիմնավորվում է նաև իրավաստեղծ որոշումների արդյունավետության բարձրացման համար համարժեք մեթոդների և տեխնոլոգիաների մշակումը: Բացահայտված են իրավաստեղծ գործընթացի առկա ձևախեղումները. նորմաստեղծման պլանավորվածության և օրենսդրական ակտերի հայեցակարգերի բացակայությունը, իրավաստեղծ որոշումների իրավական ձևի ոչ հստակ տարաբաժանումը, օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորման առարկաների միախառնումը, իրավաստեղծ գործունեության ոչ պատճաշ ընթացակարգի պահպանումը և այլն:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում ձևակերպված հետևությունները, եզրահանգումները, եզրակացությունները և իրավաստեղծ գործունեության վերաբերյալ նորովի հարցադրումներն ու մոտեցումները խորացնում են մեր գիտելիքները իրավունքի տեսության տվյալ բնագավառի վերաբերյալ և կարող են տեսական բազա հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների համար:

Հետազոտության գործնական-կիրառական նշանակությունը նրանում է, որ ատենախոսական աշխատանքի հիմնադրույթները և արդյունքները կարող են օտագործվել օրինաստեղծ և իրավաստեղծ գործունեության, իրավակիրառ և իրավամեկնողական գործընթացներում, ինչպես նաև հիմք հանդիսանալ դրանց կատարելագործման համար:

Սույն հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև ուսումնական դասընթացների ժամանակ:

Հետազոտության արդյունքների հիմնավորվածությունը, օբյեկտիվությունը և արժանահավատությունը. Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքները հիմնավորվում են ազգային և միջազգային իրավաստեղծ պրակտիկայի քննական վերլուծությամբ, մասնագիտական գրականության լիարժեք օգտագործմամբ, ինչպես նաև սահմանադրական, օրենսդրական և դատաիրավական հայեցակարգերի, նախագծերի և բարեփոխումների ծրագրերի համադրման ու իրավահամեմատական համակողմանի քննարկումների և վերլուծությունների արդյունքով:

Հետազոտության փորձաքննությունը: Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ տեղի է ունեցել ատենախոսության նախնական քննարկումը և երաշխավորումը:

Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է հետազոտության նպատակով և առաջադրված խնդիրներով: Ըստ այդմն էլ, աշխատանքը բաղկացած է ներածական մասից, երեք գլխից, որոնք ներառում են ութ ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը

Աշխատանքի ներածությունում հիմնավորվում է թեմայի հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության հիմնական դրույթները, աշխատանքի գիտական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում՝ «**Իրավաստեղծ գործունեությունը որպես հիմնարար իրավաբանական կատեգորիա. էությունը, հասկացությունը, տեսակները և սկզբունքները»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **«Իրավաստեղծ գործունեության ընդհանուր բնութագիրը»** վերնագրով, հեղինակը բացահայտում է իրավաստեղծ գործունեության՝ որպես իրավակազմավորման եզրափակիչ փուլի էությունը, բնութագրական գծերը և հասկացությունը՝ այն բնորոշելով ժողովրդի և պետության իրավասու մարմինների առանձնահատուկ գործունեություն, որի արդյունքում ստեղծվում, փոփոխվում և վերացվում են իրավական նորմերը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Իրավաստեղծ գործունեության տեսակները և դրանց առանձնահատկությունները»** վերնագրով, հեղինակը նախ դասակարգում է իրավաստեղծ գործունեության տեսակները՝ ըստ իրենց սոցիալ-իրավական

նշանակությամբ (ժողովրդի կողմից անմիջական օրինաստեղծ գործունեություն, բարձրագույն ներկայացուցչական մարմնի օրինաստեղծ գործունեություն, ենթաօրենսդրական իրավաստեղծ գործունեություն, դատական իրավաստեղծ գործունեություն, տեղական ինքնակառավարման մարմինների իրավատսեղծ գործունեություն և կորպորատիվ կազմակերպությունների իրավաստեղծ գործունեություն), ապա ներկայացրել է դրանցից յուրաքանչյուրի առանձնահատուկ կողմերը:

Երրորդ ենթագլխում՝ **«Իրավաստեղծ գործունեության սկզբունքները»** (ելակետային, ղեկավար դրույթները) վերնագրով, հեղինակը հանգամանորեն քննարկել է իրավաստեղծ գործունեության հետ առնչվող այն ելակետային, հիմնարար դրույթները (սկզբունքները), որոնցով ղեկավարվում են իրավաստեղծության սուբյեկտները: Դրանք են՝իրավական և սոցիալական լեգիտիմությունը, ժողովրդավարությունը, հրապարակայնությունը գիտական հիմնավորվածությունը, որոշակիությունը և այլն:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Իրավաստեղծման կառուցակարգի բովանդակությունը, տարրերը և գործառույթները»** վերտառությամբ, բաղկացած է չորս ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Իրավաստեղծ գործունեության կառուցակարգի բովանդակային առանձնահատկությունները»** վերնագրով, հեղինակը համակարգային վերլուծության արդյունքների հիման վրա ներկայացրել է իրավաստեղծ գործունեության կառուցակարգի սոցիալ-իրավական բնութագրական և բովանդակային առանձնահատկությունները:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավաստեղծ գործունեության կառուցակարգի տարրերը»** վերնագրով, հեղինակը քննական վերլուծության է ենթարկել իրավաստեղծ կառուցակարգի տարրերի բովանդակային առանձնահատկությունները:

Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Իրավաստեղծման կառուցակարգի գործառույթները»** վերնագրով, հեղինակը համակարգային վերլուծության է ենթարկել իրավաստեղծ գործունեության կառուցակարգի գործառույթները՝ դրանց փոխկապվածության և տրամաբանական հիմնավորվածության համատեքստում:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«ՀՀ սահմանադրական փոփոխությունները և իրավաստեղծ գործունեության կատարելագործման հիմնական ուղղությունները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«ՀՀ սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունն իրավաստեղծ գործունեության համատեքստում»** վերնագրով, հեղինակը տեսականորեն հիմնավորում է մեզանում իրականացվելիք սահմանադրական և դատաիրավական փոփոխությունների օբյեկտիվ անհրաժեշտությունն իրավաստեղծ գործունեության կատարելագործման և օրենսդրության համակարգի բարելավման տեսանկյունից:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավաստեղծ գործունեության կատարելագործման հիմնական ուղղությունները»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն քննարկել է ազգային իրավական համակարգում իրավաստեղծ գործունեության կատարելագործման եղանակները և օրենսդրական զարգացման առաջնահերթությունները հետհեղափոխական հասարակական ու սոցիալ-իրավական արմատական փոփոխությունների տեսանկյունից:

Ատենախոսության հիմնական եզրակացություններն են.

1. Թավշյա հեղափոխությունից հետո էականորեն ավելացել է օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունման ծավալները, ինչը խստորեն ազդել է ընդունվող նորմատիվ իրավական ակտերի որակական հատկանիշների վրա: Հետևաբար, սա պահանջում է արմատական բարեփոխումների իրականացում նորմաստեղծ գործունեության ոլորտում:
2. Հեղինակը գտնում է, որ արմատական քայլերից պետք է լինեն.

ա) իրավաստեղծ գործունեության մասին գիտականորեն հիմնավորված հայեցակարգային ռազմավարության մշակում,

բ) իրավաստեղծ գործունեությունը պետք է համապատասխանի երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական օբյեկտների պահանջներին,

գ) իրավաստեղծ գործունեությունը պետք է հիմնված լինի, գիտականորեն և տրամաբանորեն փաստարկված:

3. Իրավաստեղծ գործունեությունը պետք է ղեկավարվի հետևյալ սկզբունքների վրա՝ իրավունքի գերակայությունը, մարդասիրությունը, իրավական և սոցիալական լեգիտիմությունը, արհեստավարժությունը, սոցիալական արդարությունը:
4. Իրավաստեղծ գործունեության հիմքում պետք է ընկած լինի իրավունքի հետևյալ փիլիսոփայությունը.

1) Իրավաստեղծ մարմինը պետք է տարբերակի իրավունքի և օրենքի (ենթաօրենսդրական ակտի) իրավական երևույթները, քանի որ իրավաստեղծ գործունեության ցանկացած ակտ իրավունք չէ,

2) այս առումով իրավունքի բովանդակությունը պետք է համապատասխանի

արդարության, իրավաբանական հավասարության, ազատության, մարդասիրության հատկանիշները:

5. Իրավաստեղծ գործունեության բովանդակությունը և ընթացակարգը, ինչպես նաև ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն երկրի միջազգային պարտավորություններին, միջազգային իրավունքների հիմնարար սկզբունքներին և իրավաստեղծ պրակտիկային:
6. Իրավաստեղծ գործունեության գիտական կազմակերպումը ենթադրում է, որ ազգային իրավական համակարգում տեղ գտած բազմաթիվ թերություններից, սխալներից, բացերից, որի հետևանքով համակարգը կդառնա գործուն, արդյունավետ, կայուն, միասնական, ինչը հնարավորություն կտա ոչ միայն իրավական, այլև տնտեսական, սոցիալական, մշակութային առաջընթացին:
7. Օրինագծերի որակական հատկանիշների բարձրացման նպատակով Ազգային ժողովում քննարկվող օրինագծերը՝ առանց բացառության, պետք է ենթարկվեն գիտական փորձաքննության՝ համապատասխան հաստատություններում: Անհրաժեշտության դեպքում փորձաքննության մասնակից պետք է դառնան նաև գիտության այլ բնագավառների փորձագետները:
8. Պետահիրավական կառույցում (օրինակ՝ ՀՀ Կառավարությանը կից) առաջարկվում է ներդնել պարբերաբար իրավական մշտադիտարկման ինստիտուտ, որը հետևողական և շարունակական մշտադիտարկման արդյունքներից բխող օբյեկտիվ և արժանահավատ գնահատականներ կտա իրավական համակարգի գործառնության որակի և արդյունավետության վերաբերյալ, կբացահայտի հակասությունները և իրավական բացերը, գիտականորեն հիմնավորված և իրավակիրառ պրակտիկայով փաստարկված առաջարկություններ կներկայացնի օրինաստեղծ նախագծերի և գործող նորմատիվ իրավական ակտերի որակական հատկանիշների կատարելագործման ուղղությամբ:
9. Իրավաստեղծ գործունեությունը որակապես բարելավելու, նորմատիվ իրավական ակտերի որակական հատկանիշները ապահովելու, ինչպես նաև իրավական կարգավորումն արդյունավետ դարձնելու համար, անհրաժեշտ է իրավաստեղծ գործունեության փիլիսոփայությունը դնել մարդակենտրոն և ազգային անվտանգության հիմքերի վրա: Բացի դրանից, իրավաստեղծ գործունեությունը պետք է ղեկավարվի նաև ազգային ավանդական իրավական մշակույթի համաշխարհային լավագույն դրական փորձով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

ա) Մենագրություններ.

1. Նորմաստեղծության համաշխարհային պրակտիկան և ժամանակակից հայեցակարգային մոտեցումները: Երևան, Եվրոպրինտ, 2018, 184 էջ:
2. Իրավաստեղծ գործունեության հասկացությունը, էությունը և տեսակները: Երևան, Եվրոպրինտ, 2017, 64 էջ:
3. Դիստրիբյուտորական պայմանագրի իմպլեմենտացիայի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Երևան, Եվրոպրինտ, 2019, 72 էջ:
4. Իրավաստեղծ գործունեության պատմատեսական ասպեկտները: Երևան, Եվրոպրինտ, 2017, 132 էջ:

բ) Գիտական հոդվածներ.

1. Նորմաստեղծ գործունեության համաշխարհային փորձի պատմական ակնարկ // «Արդարադատություն», №2 (43), էջ 49-54:
2. Правотворчество: вопросы теории // «Արդարադատություն», Երևան, 2018, N3 (44), էջ 60-65:
3. Իրավաստեղծ գործունեության հասկացությունը, էությունը և նշանակությունը // «Արդարադատություն», Երևան, 2018, N4 (45), էջ 35-40:
4. Իրավաստեղծ գործունեության կատարելագործման և ազգային օրենսդրության համակարգի զարգացման հիմնական ուղղությունները // «Հայ հասարակության զարացման հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում. Մարտահրավերներն ու դրանց լուծումները»: Գիտական հոդվածների ժողովածու: ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ: Երևան, 2019, էջ 218-236 (համահեղինակ՝ իրավ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Գ.Հ. Սաֆարյան):

Мурадян Лилит Айказовна

Проблемы правотворческой деятельности в Республике Армения: в контексте конституционных изменений

РЕЗЮМЕ

Актуальность исследования данной темы обусловлена возрастающей ролью права и правотворчества в процессе формирования гражданского общества и правового государства, в Республике Армения. В работе обстоятельно рассматриваются проблемные вопросы правотворческой деятельности в правовой системе РА. В частности детально рассматриваются теоретические и практико-прикладные аспекты правотворческой деятельности в контексте проводимых политико-правовых реформ современной Армении.

В данной диссертационной работе под правотворчеством понимается специальная, целенаправленная деятельность народа и государственных органов по выражению общественной потребности и соответствующих интересов в общеобязательных правилах поведения, которые имеют место на завершающей стадии правообразования. В свою очередь, роль субъектов правотворчества заключается в переводе с теми или иными модификациями различных общественных закономерностей на язык правовых категорий и понятий, принципов и ценностей, институтов и функций и, наконец, на язык юридических норм.

На современном этапе развития, правотворчество в РА проявляется в первую очередь как принятие правового акта непосредственно населением страны путем референдума, либо, как издание актов, содержащих правовые нормы, государственными и иными управомоченными органами.

В данной диссертации обстоятельно проведен анализ механизма правотворческой деятельности:

Научная новизна данной диссертации выражается в том, что на общетеоретическом уровне детально изучаются проблемы и основные концептуально-теоретические подходы к выявлению сущности и содержания правотворческой деятельности.

В авторском подходе, качество правотворчества проявляется из правовой потребности армянского общества и эффективного правового регулирования общественных отношений.

Кроме того, в данной диссертации подробно рассматриваются основные признаки и содержательные особенности правотворчества на современном этапе развития законодательства и публично-правовых институтов РА.

Материалы диссертации способствуют дальнейшей разработке концептуальных основ теории и практики правотворческой деятельности.

Материалы исследования также могут быть использованы сотрудниками правотворческих органов государственной власти и управления, а также в учебном процессе по предметам теории права, конституционного и административного права и других отраслевых дисциплин.

Теоретическое значение исследования определяется его актуальностью, новизной, научно обоснованными и аргументированными выводами и положениями. В теоретическом плане основные положения работы позволяют получить цельное представление о процессе правотворческой деятельности.

Диссертационное исследование развивает и дополняет не только соответствующие разделы теории права и государства, но и отраслевые дисциплины, изучающие проблемные вопросы правотворчества. Рассматривая некоторые аспекты правотворчества, автор не претендует на исчерпывающее их осмысление. Данная проблема исключительно многогранна. Она может быть решена лишь совместными усилиями не только правоведов, но и представителей различных отраслей знаний как теоретической, так и прикладной направленности.

Практическое значение исследования заключается в том, что сформулированные выводы и предложения могут способствовать повышению качества и эффективности правотворчества совершенствования действующего законодательства. Высказанные авторские суждения могут быть полезными для уточнения не только доктринального, но и практико-прикладного понимания сущности и содержания правотворческой деятельности.

Lilit Muradyan Haykaz

The Issues of Legislative Activity in the Republic of Armenia: in the Context of Constitutional Changes

Summary

The relevance of this topic is due to the growing role of law and law-making in the process of forming civil society and the rule of law in the Republic of Armenia. In particular, theoretical and practical-applied aspects of law-making activity are examined in

detail in the context of ongoing political and legal reforms in modem Armenia.

In this dissertation, lawmaking is understood as a special, purposeful activity of the people and state bodies in expressing social needs and corresponding interests in generally binding rules of behavior, which is at the final stage of law formation. In turn, the role of subjects of lawmaking is to translate, with various modifications, various social laws into the language of legal categories and concepts, principles and values, institutions and functions, and, finally, into the language of legal norms.

At the present stage of development, lawmaking in the Republic of Armenia is manifested primarily as the concept of a legal act directly by the population of the country through a referendum, or as the publication of acts containing legal norms by state and other authorized bodies.

In this dissertation, a thorough analysis of the mechanism of law-making activity is carried out.

The scientific novelty of this dissertation is expressed in the fact that at the general theoretical level, problems and basic conceptual and theoretical approaches to identifying the essence and content of law-making activity are studied in detail.

In the author's approach, lawmaking is manifested from the legal needs of Armenian society and the effective legal regulation of public relations. In addition, this dissertation examines in detail the main features and substantive peculiarities of lawmaking at the current stage of development of the legislation and public law institutions of the Republic of Armenia.

Materials of the dissertation contribute to the further development of the conceptual foundations of the theory and practice of lawmaking.

The research materials can also be used by employees of law-making bodies of state power and administration, as well as in the educational process in subjects of the theory of law, constitutional and administrative law, and other industry disciplines.

The theoretical significance of the study is determined by its relevance, novelty, scientifically sound and reasoned conclusions and provisions.

In theoretical terms, the main provisions of the work allow you to get a complete picture of the lawmaking process and the mechanism of lawmaking.

The dissertation research develops and supplements not only the relevant sections of the theory of law and the state, but also industry disciplines that study the problems of lawmaking.

Considering some aspects of lawmaking, the author does not pretend to exhaustive understanding of them.

Considering some aspects of lawmaking, the author does not pretend to exhaustive understanding of them.

The practical significance of the study lies in the fact that the conclusions and provisions formulated can contribute to improving the quality and effectiveness of lawmaking, improving the current legislation.

The expressed author's judgments can be useful for clarifying not only doctrinal, but also practical and applied understanding of the essence and content of law-making activity.

The materials of the dissertational research can be used by the deputies of the National Assembly of RA, employees of the executive power, as well as in the educational process on the disciplines of the general theory of law and the state, constitutional law, political science.